

FRIENDS of YSU

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ. ԵՐԲ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

ԵՊՀ-ի մասին

1919 թ. հիմնադրված Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ) Հայաստանի խոշորագույն և ամենահին բարձրագույն ուսումնական հաստատությունն է, որն առաջարկում է կրթական համապարփակ ծառայություններ: Որպես հետազոտական կառույց՝ ԵՊՀ-ն ապահովում է Հայաստանի հետազոտական արդյունքների և միջազգային հրապարակումների 25-30%-ը:

Բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերին զուգահեռ՝ ԵՊՀ-ն իրականացնում է նաև բազմատեսակ արտալսարանային միջոցառումներ և ծրագրեր, որոնք ուղղված են շարունակական կրթության զարգացմանն ամբողջ Հայաստանում:

Հիմնադրումից ի վեր՝ շուրջ 150.000 հայ և օտարերկրյա ուսանողներ ավարտել են ԵՊՀ-ն՝ ձևավորելով երկրի ամենամեծ շրջանավարտների համայնքը:

Ներկայում Երևանում գործող ԵՊՀ 22 կրթական ստորաբաժանումներում (ֆակուլտետներ, ինստիտուտներ, կենտրոններ) և Հայաստանի հյուսիսում գտնվող ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ևս 4 ֆակուլտետներում սովորում են շուրջ 14.000 ուսանողներ և աշխատում պրոֆեսորադասախոսական անձնակազմի՝ ավելի քան 2.000 ներկայացուցիչներ:


Ռազմավարական տեսլական

Հիմնադրելով Առաջին հանրապետության շրջանում և շարունակելով իր առաքելությունը Խորհրդային Հայաստանից մինչև ժամանակակից Հայաստանի Հանրապետություն՝ ԵՊՀ-ն ունի առանձնահատուկ ինստիտուցիոնալ հիշողություն և մարդկային կարողությունների շարունակական զարգացման ավանդույթներ: Համալսարանն առանցքային դեր է կատարում տարբեր ոլորտներում Հայաստանի որակյալ մասնագետների մեծամասնության պատրաստման գործում և ստեղծում է մտավոր կապիտալ, որն արձագանքում է ինչպես ազգային, այնպես էլ համաշխարհային ակադեմիական պահանջներին:


Լինելով ազգի մտավոր ինքնիշխանության կենտրոնական հենասյուն՝ ԵՊՀ-ն Հայաստանի կայուն զարգացման անբաժանելի մասն է: Այս առաքելությունը կյանքի է կոչվում կրթության և զորեղացման օգնությամբ մոտիվացված, կարողունակ, արդյունավետ և ապագային միտված մտածողությամբ մասնագետների անհրաժեշտ նվազագույն (կրիտիկական) քանակի պատրաստման միջոցով: Համալսարանը հավատարիմ է ինտելեկտուալ և ստեղծագործական գործունեության մեջ իր շարունակական ներգրավմանը՝ խթանելով տեղական և համաշխարհային մարտահրավերների լուծմանն ուղղված նորարարությունը:

ԵՊՀ-Ն ԹՎԵՐՈՎ


Հայաստանի ուսանողների ընդհանուր թվաքանակի (80.095) և ԵՊՀ ուսանողների թվաքանակի հարաբերակցությունը



ԵՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնաբաժինը Հայաստանի ակադեմիական անձնակազմի ընդհանուր թվում (10.969)



Կրթական ծրագրերի քանակը՝ ըստ հաստատությունների և կրթական աստիճանների



2023-2024 թթ. կարևորագույն իրադարձություններ և ձեռքբերումներ՝ հետազոտական և կրթական

- 2025 թ. ԵՊՀ-ն բարելավել է դիրքերը «QS World University Rankings» համալսարանների համաշխարհային վարկանիշավորման աղյուսակում՝ 2024 թ. զբաղեցրած 1001-1200-րդ տեղից բարձրանալով 901-950-րդ տեղը: Ինչպես նաև առաջին անգամ ընդգրկվել է «Times Higher Education»-ի՝ համալսարանների համաշխարհային վարկանիշավորման ցանկում:
- 54 բակալավրի և 186 մագիստրոսական կրթական ծրագրեր անցել են մշտադիտարկման և գնահատման գործընթաց:
- Կենսաբանության և դեղագիտության բակալավրի և մագիստրոսի երկուական կրթական ծրագրեր Հայաստանում առաջին անգամ ստացել են միջազգային հավատարմագրում, ևս վեցը անցնում են միջազգային հավատարմագրման գործընթաց:
- «Միջազգային դատարաններ և արբիտրաժ» մագիստրոսական ծրագիրը կազմվել է ՀՀ Կառավարության միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի և միջազգային դատարաններում Հայաստանը ներկայացնող փորձագետների թիմի հետ սերտ համագործակցության շրջանակում:
- Հիմնադրվել է ԵՊՀ ՍԹԵՄ ավագ դպրոցը, որն ունի 98 աշակերտ:
- 2023-2024 ուսումնական տարում ուսանողներին շնորհվել են 962 լրիվ կամ մասնակի կրթաթոշակներ:

Ուսանողական ձեռքբերումներ

- ԵՊՀ իրավաբանական թիմ. 2024 թ. փետրվարին Թբիլիսիում կայացած դատախաղ-մրցույթում գրավել է առաջին տեղը:
- ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի թիմ. անցել է 2024 թ. «ICPC» ծրագրավորման միջազգային օլիմպիադայի եզրափակիչ փուլ և 2023 թ. դեկտեմբերին դարձել Հարավային Կովկասի չեմպիոն:
- ԵՊՀ քիմիայի թիմ. Թուրքմենստանի պետական համալսարանի կազմակերպած օլիմպիադայում գրավել է երկրորդ տեղը՝ ստանալով վկայականներ Թուրքմենստանի կրթության նախարարության կողմից:
- Մենդելեևի անվան քիմիայի միջազգային օլիմպիադա. 2024 թ. ապրիլին Չինաստանի Շենժեն քաղաքում հայ ուսանողները ԵՊՀ ուսանողների և դասախոսների մարզչական առաջնորդությամբ նվաճել են արծաթե և բրոնզե մեդալներ:
- ԵՊՀ ՍԹԵՄ ավագ դպրոցի աշակերտներ. Կիրառական կենսաբանության միջազգային օլիմպիադայում նվաճել են ոսկե և արծաթե մեդալներ:

Ենթակառուցվածքներ և միջավայր

- Ամբողջությամբ վերանորոգվել և կահավորվել են ԵՊՀ Սարգիս և Մարի Իշխանյանների անվան գրադարանի 2 ընթերցասրահները, ձեռք է բերվել «EBSCO», «JSTOR» և «Brielle» թվային գրադարանների բաժանորդագրություն:
- Իրագործվել են ֆակուլտետային գրասենյակների բարեփոխումներ, ուսումնասիրվել անձնակազմի ավելի քան 300 անդամ վերապատրաստվել և որակավորվել է: Ինչպես նաև վերանորոգվել և կահավորվել է 22 ֆակուլտետային գրասենյակ:
- Հիմնանորոգվել է ԵՊՀ սանիտարական կառույցների 30%-ը:
- Հիմնանորոգվել է 27 լսարան և 30 կրթական լաբորատորիա, ստեղծվել է 7 նոր լաբորատորիա, ձեռք է բերվել և տեղադրվել ավելի քան 100 խելացի գրատախտակ:
- ԵՊՀ-ն տարածաշրջանի ամենամեծ սուպերհամակարգիչը ձեռք բերելու փուլում է, որը կտրուկ կբարձրացնի հաշվողական կարողությունները և կբարելավի տվյալների մշակման գործընթացը:

Գործընկերություն և համագործակցություն

- 249 միջազգային գործընկեր 49 երկրներից:
- Ստորագրվել են 22 նոր համագործակցության համաձայնագրեր և հուշագրեր:
- Մեկնարկել է Էրազմուսի 5 նոր ծրագիր:
- 2023 թ. ԵՊՀ-ն, համագործակցելով գործընկեր բուհերի հետ, ընդլայնել է միջազգային ուսանողների ներգրավածությունը՝ 2022 թ. գրանցած միջազգային ուսանողների թիվը 186-ից հասցնելով 397-ի: Մեկ կիսամյակ տևողությամբ իրանագիտության և ռուսագիտության ոլորտների միջազգային ծրագրերի շրջանակում հյուրընկալվել են ուսանողներ Օքսֆորդի, Քեմբրիջի, Էդինբուրգի, Լոս Անջելեսում Կալիֆոռնիայի, Յեյլի, Արիզոնա նահանգի, Կառլով, Տոկիոյի, Ժնևի և Բոլոնիայի համալսարաններից:
- Ավելի քան 120 պետական ծառայողներ մասնակցել են հաղորդակցության, պետական կառավարման և օրենսդրության վերաբերյալ 20+ բաց դասընթացների, ԵՊՀ-ի շուրջ 200 աշխատակիցներ մասնակցել են մասնագիտական զարգացման դասընթացների, իսկ ավելի քան 500 ուսանողներ և 6000 դիմորդներ մասնակցել են վերապատրաստման և մասնագիտական կողմնորոշման դասընթացների:
- Իրականացվել են ավելի քան 30 պրակտիկայի ծրագրեր, հետազոտական գործունեություններ, վերապատրաստման և կրթական նախաձեռնություններ, ենթակառուցվածքային զարգացման նախագծեր տեղական և միջազգային բիզնես գործընկերների, այդ թվում «Փի-Այ-Էմ Սայնս», «Սերվիս Տիտան», «Ակբա բանկ», «Հայկական ատոմային էլեկտրակայան», «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ», «Բիբլոս բանկ», «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» և մի շարք այլ կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակում:

Գիտական ենթակառուցվածքները ԵՊՀ-ում. հիմնական 9 կենտրոնները և լաբորատորիաները

1. Սոցիալական և հումանիտար հետազոտությունների ինստիտուտ (25 աշխատակից)

2. Կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտ (128 աշխատակից)

3. Ֆարմացիայի ինստիտուտի գիտահետազոտական կենտրոն (22 աշխատակից)

4. Կիրառական սոցիոլոգիայի գիտահետազոտական լաբորատորիա (9 անդամ)

5. Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ (65 աշխատակից)


6. Հոգեբանության գիտահետազոտական կենտրոն (19 աշխատակից)

7. Ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտ (195 աշխատակից)


8. Մաթեմատիկական և կիրառական հետազոտությունների կենտրոն (45 աշխատակից)

9. Քիմիայի գիտահետազոտական ինստիտուտ (39 աշխատակից)

Լաբորատորիաների և կենտրոնների ֆինանսական աջակցությունները վերջին տարիների ընթացքում




Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե. ԵՊՀ սարքավորումներ




Գիտական լաբորատորիաների և կենտրոնների հետազոտական արտադրողականությունը վերջին տարիների ընթացքում

Կենտրոն/Ինստիտուտ	Ֆինանսավորում		Հոդվածներ		Միջ. հոդվածներ	Մենագրություններ		Համաժողովներ	
	2022	2023	2022	2023	2023	2022	2023	2022	2023
Կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտ	181627000	204928000	134	115	70	17	36	80	123
Կիրառական սոցիոլոգիայի գիտահետազոտական լաբորատորիա	13711000	15763000	11	12	3	6	6	12	3
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ	95745360	85868900	51	46	4	22	28	40	26
Սոցիալական և հումանիտար հետազոտությունների ինստիտուտ	84940000	34258000	4	28	9	5	28	3	35
Հոգեբանության գիտահետազոտական կենտրոն	23132000	27599000	46	23	6	6	9	32	22
Մաթեմատիկական և կիրառական հետազոտությունների կենտրոն	48751000	62791000	32	35	27	5	6	11	17
Քիմիայի գիտահետազոտական ինստիտուտ	68441000	76505000	98	40	22	0	0	41	40
Ֆարմացիայի ինստիտուտի գիտահետազոտական կենտրոն	24897000	29241000	5	5	5	0	0	1	1
Ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտ	303484450	383150500	165	139	115	5	8	71	139

Ներքին դրամաշնորհներ ԵՊՀ-ում




ԵՊՀ հրապարակումները «Wos»/«Scopus» գիտական շտեմարաններում



ԵՊՀ հրապարակումները «Scopus» գիտական շտեմարանում. համեմատական վերլուծություն հայկական հրատարակությունների հետ

	2020	2021	2022	2023	2024
Հայաստան (բոլոր հրապարակումները)	1304	1326	1525	1711	398
Հայաստան (միայն հոդվածներ)	1044	1058	1115	1330	325
ԵՊՀ (բոլոր հրապարակումները)	318	376	335	404	111
ԵՊՀ (միայն հոդվածներ)	273	227	269	344	99







ԵՊՀ-ի արձագանքը Արցախի բնակչության բռնի տեղահանությանը

Արցախահայության բռնի տեղահանման ճգնաժամի պայմաններում ԵՊՀ-ն մոբիլիզացրեց իր ուսանողներին, դասախոսներին և վարչական անձնակազմին, հատկացրեց զգալի ֆինանսական և ենթակառուցվածքային ռեսուրսներ՝ աջակցելու Արցախում ադրբեջանական ռեժիմի կողմից իրականացված էթնիկ զտումների զոհ դարձած հայերին:

- Ավելի քան 300 ԵՊՀ կամավորներ տեղակայվել են հանրապետության արտակարգ իրավիճակների կենտրոններում:
- ԵՊՀ-ն արցախցի ավելի քան 450 փախստականների կացարան է տրամադրել Բյուրականի և Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազաներում:
- Փախստականներին առաջարկվել են հոգեբանական աջակցության անվճար ծառայություններ:
- Իրավաբանական անվճար օգնություն է տրամադրվել նրանց իրավական խնդիրները հասցեագրելու համար:
- ԵՊՀ-ն անվճար ճմեռային և ամառային դպրոցներ է կազմակերպել արցախցի երեխաների և երիտասարդների համար:
- Փախստականներին տրամադրվել է մարդասիրական օգնություն:
- ԵՊՀ-ն ստեղծել է աշխատանքի տեղավորման և ապաստարանների տվյալների բազա՝ փախստականներին աշխատանք և բնակարան գտնելու հարցում օգնելու համար:
- Արցախցի 800 ուսանող ԵՊՀ-ում ստացել է անվճար կրթություն:
- ԵՊՀ-ն տրամադրել է ներքին գիտահետազոտական 5 դրամաշնորհ՝ Արցախում էթնիկ զտումների իրավական, սոցիալական, տնտեսական, հոգեբանական և քաղաքական հայեցակետերն ուսումնասիրելու համար:


ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
1919
1919